ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԱՆ-ՄԱԾՁԲ-25/21

ք. Երևան «___» _____ 2021 թ.

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն, ի դեմս Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Պողոսյան ընդ փարթներս ըթորնիս>> ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Վ. Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Դատական ոլորտում ծառայությունների մատուցման, այն է՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԴ/22964/02/21 և ԵԴ/22994/02/21 քաղաքացիական գործերով Պատվիրատուի դատավարական իրավունքների և օրինական շահերի հետ կապված ծառայությունների պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն), որի ընդհանուր նկարագրության համար հիմք է հանդիսանումսույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը՝ նախապես Կատարողին վճարելով մինչ Պայմանագրի դադարեցումը մատուցված Ծառայությունների դիմաց:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը :

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

2.2.3. Կատարողին ժամանակին տրամադրել Պայմանագրի 1.1. կետում նշված Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ և պահանջվող տեղեկատվությունն ու փաստաթղթերը:

2.2.4. Չխոչընդոտել Կատարողի կողմից Ծառայությունների մատուցմանը:

2.2.5. Անհրաժեշտության դեպքում և/կամ Կատարողի պահանջով վերջինիս տրամադրել գրավոր կամ բանավոր տեղեկատվություն, փաստաթղթեր, առանց որոնց անհնար կլինի Կատարողի կողմից Ծառայությունների պատշաճ մատուցումը: Ընդ որում, Պայմանագրի սույն ենթակետով սահմանված տեղեկատվության և/կամ փաստաթղթերի իսկության և պատշաճության պատասխանատվությունը կրում է Պատվիրատուն, ով կրում է դրանց անպատշաճության և/կամ անարժանահավատության բացասական հետևանքների ռիսկը:

2.2.6. Անմիջապես տեղեկացնել Կատարողին նրան տրամադրված գրավոր կամ բանավոր տեղեկատվության, փաստաթղթերի հետ կապված փոփոխությունների վերաբերյալ, առանց որոնց անհնար կլինի Կատարողի կողմից Ծառայությունների պատշաճ մատուցումը:

2.2.7. Անհրաժեշտության դեպքում գործը վարող փաստաբանի(ների)/իրավաբանի(ների) անունով տրամադրել լիազորագիր (փաստաբանի(ների)/իրավաբանի(ների) ընտրությունը կատարվում է Կողմերի համաձայնությամբ), որի բովանդակությունը նախապես կազմվում է Կատարողի կողմից՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարել պայմանագրով նախատեսված գումարները և չխոչընդոտել Ծառայությունների մատուցմանը:

2.3.2. Ծառայությունների մատուցմանը ներգրավել երրորդ անձանց:

2.3.3. Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուից պահանջել տրամադրել բանավոր կամ գրավոր տեղեկատվություն, փաստաթղթեր, բացատրություններ, որոնք անհրաժեշտ են Ծառայությունների մատուցման համար: Կատարողը ելնում է Պատվիրատուի ներկայացրած տեղեկությունների և փաստաթղթերի ճշտության և օրինականության կանխավարկածից:

2.3.4 Համաձայնեցնելով Պատվիրատուի հետ որոշել Ծառայությունների մատուցման ընթացքը և եղանակները՝ հաշվի առնելով Պատվիրատուի շահերը: Այն դեպքում, երբ Պատվիրատուի համաձայնությունը չի հաջողվում ստանալ, սակայն Կատարողը պնդում է իր կողմից առաջարկված ընթացքի ու եղանակի ճշմարտացիությունը Կատարողն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ պահանջելով մինչ դրա լուծումն իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարում: Սույն կետով սահմանված պայմանը չի տարածվում այն դեպքերի նկատմամբ, երբ բավարար ժամկետի բացակայությամբ պայմանավորված ողջամիտ չի հանդիսանում ստանալու Պատվվիրատուի համաձայնությունը:

2.3.5 Ապահովել Պատվիրատուի կողմից տրամադրված, ինչպես նաև Ծառայությունների մատուցման ընթացքում հայտնի դարձած այն տեղեկությունների գաղտնիությունը, որոնք պարունակում են առևտրային կամ այլ գաղտնիք կամ Պատվիրատուն դրանք փոխանցել է Կատարողին գաղտնիության հիմունքներով, որը չի ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակումը, ինչպես նաև Ծառայությունների մատուցման ընթացքում տրամադրված տեղեկատվության կիրառման անհրաժեշտությամբ պայմանավորված դեպքերը, այդ թվում՝ Պատվիրատուից բացի այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում գործել ելնելով Պատվիրատուի շահերից:

2.4.5 Ապահովել Պատվիրատուի կողմից տրամադրված, ինչպես նաև Ծառայությունների մատուցման ընթացքում հայտնի դարձած այն տեղեկությունների գաղտնիությունը, որոնք պարունակում են առևտրային կամ այլ գաղտնիք կամ Պատվիրատուն դրանք փոխանցել է Կատարողին գաղտնիության հիմունքներով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

3.2 Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 900000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ 270000 (երկու հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, պայմանագրի երկկողմ հաստատման պահից՝ 3/երեք/ օրվա ընթացքում: Ծառայությունների մատուցման գումարի մնացած մասը՝ 630000 /վեց հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամը, վճարել Կատարողի կողմից թիվ ԵԴ/22964/02/ և թիվ ԵԴ/22994/02/21 քաղաքացիական գործերի շրջանակներում ներկայացված հայցադիմումների պատասխանները, ինչպես նաև նույն քաղաացիական գործերով կայացված՝ ապացույց պահանջելու որոշումների համաձայն ապացույցները սահմանված ժամկետներում դատարան ներկայացնելուց հետո՝ մինչև 31.07.2021թ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա (հավելված N 3)՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կողմերը Պայմանագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Եթե Պատվիրատուն ուշացնում է սույն Պայմանագրով սահմանված կարգով վճարումներ կատարելը, ապա Ծառայությունների մատուցումը և Պայմանագրի գործողության ժամկետը կասեցվում է մինչև վճարումը:

5.3 Ծառայությունների մատուցման շրջանակներում Կատարողի տրամադրած տեղեկատվության հիման վրա իր գործունեության վերաբերյալ որոշումները Պատվիրատուի կողմից ընդունվում են ինքնուրույն՝ առանց Կատարողի հետ պարտադիր համաձայնեցման:

Պատվիրատուի կողմից Կատարողի խորհուրդների կամ հրահանգների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը կամ Ծառայությունների մատուցման շրջանակներում Կատարողի տրամադրած տեղեկատվության սխալ կիրառումը Պատվիրատուի կողմից ազատում է Կատարողին հետագայում առաջացող վիճելի հարցերի կապակցությամբ օրենքով սահմանված պատասխանատվությունից:

5.4. Կատարողը պատասխանատու չէ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների կողմից կիրառվող ժամկետների և համապատասխան ժամկետների որևէ ձգձգման համար, ինչպես նաև վերջիններիս որոշումների, այլ ակտերի և/կամ վարչարարության արդյունքների համար:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա, բացառությամբ Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման շրջանակներում Պատվիրատուի համաձայնությամբ և վերջինիս անունից՝ որպես ներկայացուցիչ Կատարողի կնքած գործարքների, այդ թվում՝ հաշտության համաձայնության: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Պատվիրատու»	**«Կատարող»**
«Հայէլեկտրոնավիգացիա» ՓԲԸ	**<<Պողոսյան ընդ փարթներս ըթորնիս>> ՍՊԸ**
Երևան-42, Ի. Գասպարյան 33	ՀՎՀՀ՝ 00911066
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	Հասցե՝ ՀՀ, 0002, ք. Երևան, Սարյան փող., 26/2
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.	շենք
ՀՎՀՀ 01216144	h/h՝ 1510046396970100
Գլխ. տնօրեն	Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
	Էլ. Փոստ՝ contact@kgplaw.am
	Տնօրեն Վ. Հովսեփյան
_____Ա. Գասպարյան	_____

Հավելված N 1
« » 2021թ. կնքված
ՀԱՆ-ՄԱԾՁԲ-25/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հ/հ	գնումների պլանով նախ. միջ. ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակ. (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափ միավ.	ընդհան գինը/ՀՀ դրամ	Ընդքան.	հասցեն	ժամկետ
1	75231100/1	Գնման առարկա է հանդիսանում <<Հայէրոնավիգացիա>> ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար Հանրությանը ծառայությունների մատուցման խմբում ներառված՝ <<Ծառայություններ դատական ոլորտում>> ծառայությունների ձեռքբերումը՝ Ընկերության անունից հանդես գալու Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ Ընկերության իրավունքների և օրինական շահերի ամբողջական և պատշաճ ներկայացման նպատակով ներկայացնելու Ընկերության շահերը ներքոգրյալ դատական գործերով. ա) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սարգիս Երիցյանի վարույթում գտնվող թիվ ԵԴ/22964/02/21 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Նազիկ Ալբերտի Մխիթարյանի ընդդեմ <<Հայէրոնավիգացիա>> ՓԲԸ-ի՝ հրամանն անվավեր ճանաչելու,նախկին կամ համարժեք այլ աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար գումար բռնագանձելու և	դրամ	900000	1	Ք. Երևան Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	մինչև թիվ ԵԴ/22964/02/21 և թիվ ԵԴ/22994/02/21 քաղաքացիական գործերով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից դատական ակտի հրապարակումը

		աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար հատուցում վճարելու պահանջների մասին: բ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գոռ Թորոսյանի վարույթում գտնվող թիվ ԵԴ/22994/02/21 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Սամվել Ռոբերտի Բաղդասարյանի ներկայացուցիչ Գուրգեն Ռոդիսլավի Թորոսյանը 24.05.2021 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Հայէրո-նավիգացիա» ՓԲԸ-ի՝ «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ-ի 22.03.21 թվականի աշխատանքային պայմանագիրը լուծելու և աշխատանքից ազատելու մասին թիվ 267-Ա հրամանն անվավեր ճանաչելու, հայցվորին իր նախկին աշխատանքին վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումար բռնագանձելու պահանջների մասին: Ընկերության անունից անհրաժեշտության դեպքում իրականացնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածով նախատեսված բոլոր լիազորությունները, կատարելու դատավարական անհրաժեշտ գործողությունները, մասնավորապես, բայց չսահմանափակվելով՝ – տալու և ստանալու դիմումներ, տեղեկանքներ, դատավարական բնույթի ցանկացած փաստաթուղթ, որոշում, տեղեկատվություն, – ստորագրելու (հակընդդեմ) հայցադիմումներ,					

		միջնորդություններ, հայցադիմումների պատասխաններ, այլ անհրաժեշտ փաստաթղթեր, – ընդունելու հայցապահանջներն ամբողջովին կամ մասնակիորեն, – փոխելու (հակընդդեմ) հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը, – կնքելու հաշտության համաձայնություն կամ կամ կնքելու համաձայնություն հաշտարարության վերաբերյալ և մասնակցելու հաշտարարական գործընթացին արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ, – փոխանցելու լիազորություններն այլ անձի, – պահանջելու, ներկայացնելու ցանկացած բնույթի և բովանդակության դիմումներ, այդ թվում՝ կատարողական թերթ տալու վերաբերյալ, պատասխան գրություններ, տեղեկատվություն, կամ այլ փաստաթուղթ, – ստանալու դատական ծանուցումները և դատավարական փաստաթղթերը, – ծանոթանալու ՀՀ ցանկացած դատարանի վարույթում գտնվող ցանկացած քաղաքացիական գործի նյութերին, ստանալու դրանց պատճենները, գործի նյութերից անելու քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ, – ներկայացնելու ապացույցներ և մասնակցելու դրանց հետազոտմանը, հարցեր տալու դատավարության մյուս մասնակիցներին, վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին, միջնորդություններ անելու, հայտարարություններ անելու, բացատրություններ տալու դատարանին և կատարելու					

		բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ կապված Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սարգիս Երիցյանի վարույթում գտնվող թիվ ԵԴ/22964/02/21 և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գոռ Թորոսյանի վարույթում գտնվող թիվ ԵԴ/22994/02/21 քաղաքացիական գործերի հետ:					

«Պատվիրատու»
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն

_____Ա. Գասպարյան

«Կատարող»
<<Պողոսյան ընդ փարթներս ըթորնիս>> ՍՊԸ
ՀՎՀՀ՝ 00911066
Հասցե՝ ՀՀ, 0002, ք. Երևան, Սարյան փող., 26/2 շենք
հ/հ՝ 1510046396970100
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
Էլ. Փոստ՝ contact@kgplaw.am
Տնօրեն Վ. Հովսեփյան

_____

Հավելված N 2
« » 2021թ. կնքված
ՀԱՆ-ՄԱԾՁԲ-25/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	Մարտ	Ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	75231100/1	Ծառայություններ դատական ոլորտում. Երևան քաղաքի առաջին ատկանի ընդհանուր իրավասության դատարանում թիվ ԵԴ/22994/02/21 և թիվ ԵԴ/22964/02/21 քաղաքացիական. գործերով ներկայացուցչություն						270000	630000						900000

«Պատվիրատու»
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն

_____Ա. Գասպարյան

«Կատարող»
<<Պողոսյան ընդ փարթներս ըթորնիս>> ՍՊԸ
ՀՎՀՀ՝ 00911066
Հասցե՝ ՀՀ, 0002, ք. Երևան, Սարյան փող., 26/2 շենք
հ/հ՝ 1510046396970100
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
էլ. Փոստ՝ contact@kgplaw.am
Տնօրեն՝_____Վ. Հովսեփյան